DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 1314
Ապրիլ 6, 1993

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Զելթընհամ.

Սիրելի Հայր հայկազուն,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 15, 1993 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 28, 1993-ին, եւ այդ առթիւ ընդրուած են Ծխական Խորհուրդին վեց անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Վահան Պոյաճեան
Արսէն Խանամիրեան
Գարրլ Հովիլամազեան
Ստեփան Յովնանեան
Արամ Գրմգրմեան
Ճան Թէրզեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Թեմական Կանոնադրութեան՝ Անդամական Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է ըլլայ երկպատիկ ցանկի մը վրայէն եւ գաղտնի քուէարկութեամբ։ «Այր մարդոց Օժանդակ Միութեան» բաժնին պատրաստ գումարը (Դեկտեմբեր 31, 1992) պէտք է ըլլայ 10,539.54 տոլար. բարի եղէք այս պարագան ստուգել եւ ճիշդ օրինակը ղրկել Առաջնորդարան։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 1405
Յունիս 9, 1993

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Զելթընհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացած ենք Յունիս 7, 1993 թուակիր ձեր յանձնարարագիրը՝ Արժշ. Տ. Դաւիթ Քհնյ. Պոյաճեանի մասին։

Այս առթիւ կը փափաքինք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել ձեզի՝ որ բարի եղաք եւ ժամանակ տրամադրեցիք եկեղեցական ու արարողական գիտելիքներ ուսուցանելով Տէր Դաւիթին՝ անոր ձեռնադրութենէն առաջ եւ քառասունքին ընթացքին։

Երբ հովուական պաշտօնի մը համար դիմում կատարուի մեզի՝ նկատի պիտի ունենանք ձեր յանձնարագիրը։

Զեզի կը մաղթենք առաւել քաջառողջութիւն եւ աստուածահաճոյ ձեր աշխատանքներուն յաջողութիւն։

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558

Holy Trinity Armenian Apostolic Church

101 Ashmead Road

Cheltenham, Pennsylvania

(215) 663-1600

Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան, Հոգեւոր Հովիւ

VERY REV. HAIGAZOUN MELKONIAN
Pastor

Յունիս 7, 1993

Գերաշնորհ
Տ. Խաժակ Արքեպս. Պարսամեան, Առաջնորդ
Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի
630 Second Avenue
New York, New York 10016

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Այս մի քանի ամիսներուն ընթացքին աշխատած եմ Արժ. Տէր Դաւիթ Քհյ. Պօյանեանին հետ նախ քան իր քահանայութեան ձեռնադրութիւնը օգնելով՝ ծիսագիտութեան եւ ծիսակատարութեան մարզերուն մէջ : Յետ ձեռնադրութեան, Քառասունքին ընթացքին աշխատեցանք Սուրբ Պատարագի մատուցման ինչպէս նաեւ այլ եկեղեցական մարզերուն որոնք Տէր Հայրը պէտքը զգաց եւ մանաւանդ եզակի արարողութիւններուն օրինակ՝ Զրօրհնէք, Խաղողօրհնէք, Անդաստան եւ այլն :

Տէր Դաւիթը քաջ տիրացած է մեր եկեղեցւոյ աստուածաբանութեան, ծէսն ու ծիսագիտութիւնը, ան նաեւ պատրաստ է խորհրդակատարութեան եւ ծիսակատարութեան մէջ : Ան ունի կորովն ու նուիրումը իր կոչումին եւ պատրաստ է հովուական ասպարեզը մտնել : Թէեւ իր հովուական գիտելիքներով ուղղակի չեմ օգնած, վստահ եմ որ անոնց ալ լիովին տիրացած է : Այժմ Տէր Դաւիթը պատրաստ է ընթունիլ իր հովուական պաշտօնը որուն միջոցաւ եւ հովուական փորձառութեամբ ան պիտի կարենայ ընթացք տալ իր կոչումին ի փառս Աստուծոյ եւ յօգուտ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ :

Գերաշնորհ Հայր, սոյն նամակով ընդունեցէք իմ անվերապահ գնահատանքը Տէր Դաւիթ Քհյ. Պօյանեանին :

Մատչիմ ի համբոյր Ս. Աջոյդ՝

Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2060
Ապրիլ 28, 1995

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Զելթընհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացած ենք Մարտ 27, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ՝ նկատի ունենալով որ Եկեղեցւոյդ տրարտու անդամներուն թիւը 330—ի բարձրացած է, համայնքիդ թեմական պատգամաւորներուն թիւը երեքէն չորսի բարձրացուցած էք՝ Տիար Գրիգոր Մահսէրէճեանը որպէս պատգամաւոր ընտրելով։

Կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել որ համայնքներու թեմական պատգամաւորները կ՚ընտրուին չորս տարին անգամ մը, եւ ձեր համայնքը անցեալ տարի ընտրեց իր պատգամաւորները։ Կարելի չէ, այդ չորս տարիներու ընթացքին, պատգամաւորներու թիւի յաւելում եւ կամ նուազում կատարել՝ տրատու անդամներու թիւը նկատի ունենալով։ Ուրեմն, թեմական պատգամաւորներու համար ձեր համայնքին ընտրութեան տարին 1998—ն է, եւ մինչեւ այդ թուականը համայնքիդ պատգամաւորներուն թիւը կը մնայ անփոփոխ։

Բարի եղէք այս պարագան նկատի ունենալ, եւ անհրաժեշտ մեկնաբանութիւնները փոխանցել Տիար Գ. Մահսէրէճեանի։

Սիրոյ ողջունիւ

Խաչատուր Արք. Պարսամեան

ԽԱՉԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2031
Ապրիլ 13, 1995

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Զելթընհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 27, 1995 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Մարտ 5, 1995-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի վեց անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Զարլզ Անթառամեան
Վահան Պոյաճեան
Ստեփան Յովնանեան
Ճէք Գասապեան
Ճան Թէրզեան
Կրեկորի Եազըճեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Տարեկան Ժողովի դիւանի ընտրութիւնը եւս պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ եւ երկպատիկ ցանկի վրայէն։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունի

Խաչակ Արք. Պարսամեան

ԽԱՉԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2067
Մայիս 1, 1995

Հոգեշնորհ
Տ. Հայկական Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Զելթընհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացած ենք Մարտ 27, 1995 թուակիր ձեր նամակը, որով փափաք կը յայտնէք Բրշ. Առէն Սրկ. Ճէպէճեանը պաշտօնի կոչել համայնքիդ մէջ՝ երբ ան իր ուսումը աւարտէ։

Գնահատելի է Անդամական Ժողովիդ այս որոշումը, որով եկեղեցական ասպարէզ ընդգրկելու կոչում ունեցող սարկաւագի մը առիթ կ՚ընծայուի փորձառութիւն ձեռք բերել Եկեղեցւոյդ Հոգեւոր Հովիւի անմիջական հսկողութեան ներքեւ՝ անոր վստահելով կարգ մը պաշտօններ։

Երբ Առէն Սարկաւագ Երուսաղէմէն վերադառնայ՝ այս մասին պիտի խօսինք իրեն հետ։ Մեր թելադրութիւնը պիտի ըլլայ որ ան ընթացք տայ իրեն եղած այս առաջարկին՝ որ մեծապէս օգտակար պիտի հանդիսանայ նաեւ իր ընդգրկելիք ասպարէզի պատրաստութեան։

Մեր որոշումը ժամանակին կը հաղորդենք ձեզի։

Սիրոյ ողջունի

Խաժակ Արք. Պարսամեան

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558

Copy Z. H.
5-12-95

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2078
Մայիս 12, 1995

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երորդութիւն Եկեղեցւոյ
Զելթընհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացած ենք Մայիս 3, 1995 թուակիր ձեր նամակը, որով Ձեր վրդովմունքը կը յայտնէք Եկեղեցւոյդ եւ Ռիչմոնտի Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ գործունէութեանց խաչաձեւումներուն կապակցութեամբ։ Ստացած ենք նաեւ օրինակները կարգ մը նամակներու եւ համայնքիդ ձեռնարկներու ժամանակացոյցին։

Կը ցաւինք որ նման խաչաձեւումներ տեղի կ՚ունենան քոյր համայնքներու միջեւ, եւ ցարդ կարելի չէ եղած ձեռնարկներու թուականներու առնչութեամբ համաձայնութեան մը յանգիլ։

Մեր անմիջական թելադրութիւնն է որ երկու եկեղեցիներու հովիւներն ու Ծխական Խորհուրդներու ատենապետները կամ ներկայացուցիչները հանդիպում մը ունենան, եւ լրջօրէն խորհրդակցին այս հարցի մասին։ Ծուխերու միջեւ եղած համագործակցու— թիւնն ու հասկացողութիւնը կը զօրացնեն համայնքները եւ առիթ կ՚ընծայեն որ հաւատացեալներ պատեհութիւն ունենան վայելելու զոյգ եկեղեցիներու ներկայացուցած յայտագիրները։

Բարի եղէք մեր այս թելադրութեան հետեւիլ եւ մեզի տեղեկացնել ձեր հանդիպումին արդիւնքը։

Կ՚աղօթենք որ Տէրը առաջնորդ հանդիսանայ համերաշխութեան եւ համագործակցութեան ի նպաստ ձեր առնելիք քայլերուն։

Սիրոյ ողջունիւ

Խաժակ Արք. Պարսամեան

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2117
Յունիս 22, 1995

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Զելթընհամ.

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացած ենք Մայիս 16, 1995 թուակիր ձեր նամակը, որով արտօնութիւն կը խնդրէք ձեր տարեկան արձակուրդը (Օգոստոս 19—էն Սեպտեմբեր 3, 1995) երկրէն դուրս անցընելու՝ ծրագրած ըլլալով ուխտաւորներու խումբ մը գլխաւորել դէպի Երուսաղէմ։

Այս գրութեամբ կ՚արտօնենք որ ձեր տարեկան արձակուրդի ընթացքին բացակայիք երկրէն։

Ձեզի եւ ուխտաւորներու խումբին կը մաղթենք բարի ճանապարհ։

Սիրոյ ողջունիւ

Խաժակ Արք. Պարսամեան

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2290
Մարտ 26, 1996

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Զելթընհամ

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Մարտ 4, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 4, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Լարրի Տէր Յակոբեան
Տոքթ. Կարօ Կարիպեան
Լին Հաճէթեան
Ճորճ Նազարէթեան
Ան Թերքանեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունիւ

Խաժակ Արք. Պարսամեան

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թիւ 2387
Մայիս 29, 1996

Հոգեխնորհ
Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Զելթընհամ

Սիրելի Հայր Հայկազուն,

Ստացած ենք Մայիս 23, 1996 թուակիր ձեր նամակը, որով շնորհակալութիւն կը յայտնենք ձեր ձեռնադրութեան 20—ամեակին մեր բերած մասնակցութեան, ինչպէս նաեւ Եկեղեցւոյդ մէջ դպիրի աստիճանի եւ ուրարի տուչութեան համար։

Մեզի համար հոգեկան ուրախութիւն էր Եկեղեցւոյդ մէջ տեսնել մեծ թիւով շնորհալի երիտասարդներ, որոնք ձեր շուրջ համախմբուած՝ կը մասնակցին ծիսակատարութեանց եւ ձեր առաջնորդութեամբ կը պատրաստուին եկեղեցական կեանքի մէջ պատասխանատու պաշտօններ ստանձնելու։ Գնահատելի է այս ուղղութեամբ ձեր կատարած օգտակար աշխատանքը։

Նոյեմբեր 3, 1996 թուականը վերապահած ենք Զելթընհամի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մեր համայնքի այցելութեան։

Սիրոյ ողջունիւ

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558